# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2024 **թվականի** N 1618-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԶԱՔԱՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Զաքար Խուրշուդյանի (ՀՎՀՀ՝ 57253862, գրանցման ամսաթիվը՝ 03.10.2007թ.) 2024 թվականի մայիսի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մայիսի 17-ին 8696-2024 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Զաքար Խուրշուդյանին Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 2/2 հասցեում իրականացնել հեղուկ վառելիքի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Զաքար Խուրշուդյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» Մայիսի 2024 **թվականի** N 1617-Ա

**«ՍԻՏԱՐԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՈՒՇԻԿ ԱՍՊԱՏՈՒՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 246 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Սիտարա» ՍՊԸ-ի տնօրեն Անուշիկ Ասպատուրյանի (ՀՎՀՀ՝ 01280629, գրանցման ամսաթիվը՝ 02.03.2018) 2024 թվականի մայիսի 24-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մայիսի 24-ին 9088-2024 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Սիտարա» ՍՊԸ-ի տնօրեն Անուշիկ Ասպատուրյանին Գյումրի քաղաքի Աբովյան 246 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սիտարա» ՍՊԸ-ի տնօրեն Անուշիկ Ասպատուրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» Դեկտեմբեր 2024 թվականի № 1616-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ 8-ՐԴ ՇԱՐՔ 26 (ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ 2-ՐԴ ՇԱՐՔ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0446-0041)) ԵՎ Թ. ՄԱՆԴԱԼՅԱՆ ՓՈՂՈՑ 24 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0446-0043) ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Թումասյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №8960 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Էլեկտրատեխնիկական 8-րդ շարք 26 (կադաստրի կոմիտեի էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակում մուտքագրված Էլեկտրատեխնիկական 2-րդ շարք (կադաստրային ծածկագիր 08-001-0446-0041)) և Թ. Մանդալյան փողոց 24 (կադաստրային ծածկագիր 08-001-0446-0043) բնակելի տների միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Թ. Մանդալյան փողոց, 24 բնակելի տուն**

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«29» հուլիսի 2024 թվականի № 1615-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 94.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 174.00 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0320-0041) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 23-ի №1520–Ա որոշումը, չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության հատակագծերը ու քաղաքացի Անահիտ Սանասարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №9073 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող սեփականության իրավունքով քաղաքացի Անահիտ Սանասարյանին պատկանող 94.64 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 174.00 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0320-0041) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 5/21 շինություն**

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» Դեկտ. 2024 թվականի №1614-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 61/4 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №28102021-08-0054) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Վահան Խաչատրյանի լիազորված անձ Արմենուհի Վարդանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №8802 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Տեր-Գաբրիելյան փողոց, 61/4 արտադրամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №28102021-08-0054) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 2998.62 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գյումրի, Ս. Տեր-Գաբրիելյան փողոց, 32 շինություն**
2. 441.38 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գյումրի, Ս. Տեր-Գաբրիելյան փողոց, 32/1 շինություն**

Действительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» Հուլիսի 2024 թվականի №1613-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՍԻԼԻ ԵՎ ՍԱՇԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 2-ՐԴ ՇԱՐՔ 7 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0341-0015) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի հատակագիծը ու քաղաքացի Վասիլի Կարապետյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №8789 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Քաղաքացիներ Վասիլի և Սաշա Կարապետյաններին պատկանող Գյումրի քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց 1-ին նրբանցք 2-րդ շարք 7 հասցեագրությամբ անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր 08-001-0341-0015) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Դեմիրճյան փողոց, 2-րդ շարք, 7 բնակելի տուն**

Недействительная подпись
X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» մայիսի 2024 թվականի №1612-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 58Գ ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 214.44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ, 2.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ, 49.74 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 26-ի №937–Ա որոշումը, հողամասի ու շինությունների հատակագծերը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, 26 Կոմիսարների փողոց, 58գ հասցեի բնակելի տան հողամասին կից 214.44 քառակուսի մետր մակերեսով հողամասին, 2.07 քառակուսի մետր մակերեսով ներքին մակերեսով բնակելի շինությանը, 49.74 քառակուսի մետր մակերեսով ներքին մակերեսով օժանդակ շինություններին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., 26 Կոմիսարների փողոց, 44/3 շինություն**

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«29» Սեպտեմբերի 2024 թվականի № 1611-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի №1500–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԵՎՀԱՏ ԵՎ ԱՆԴՐԵՅ ԱԴԱՄՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 195.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 131.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արևհատ Ադամյանի լիազորված անձ Սասուն Թամազյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №9162 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 21-ի №1500–Ա որոշմամբ սեփականության իրավունքով քաղաքացիներ Արևհատ և Անդրեյ Ադամյաններին պատկանող 195.3 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած 131.2 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Օզանյան փողոց, 11/3 բնակելի տուն**

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<29>> մայիսի 2024 թվականի N 1610-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստի ժամանակավոր պաշտոնակատար Լևոն Հակոբի Բարսեղյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափի 80 (ութսուն) տոկոսի չափով:

**2.** Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Հակոբի Բարսեղյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> Ծայիսի 2024 թվականի N 1609-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ԱՐԱՄ ՄԱՐՏՈՒՆԻԿԻ ՇԱԲՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի օգնական Արամ Մարտունիկի Շաբոյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
**2.** Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Մարտունիկի Շաբոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

<<29>> Մայիսի 2024 թվականի N 1608-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՒՐԵՆԻ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին >> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Սյուզաննա Սուրենի Վարդևանյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

**2.**Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն մեջ է մտնում Սյուզաննա Սուրենի Վարդևանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

x

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» մայիսի 2024 **թվականի** N 1607 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանի (ՀՎՀՀ՝ 57311905, գրանցման ամսաթիվը՝ 04.02.2016 թ.) 2024 մայիսի 22-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 մայիսի 22-ին 8894-2024 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցի հարևանությամբ իրականացնել պաղպաղակի, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի սեպտեմբերի 22-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմենուհի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<29>> մայիսի 2024 թվականի N 1606-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Հովհաննեսի Բադալյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

**2.** Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Հովհաննեսի Բադալյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

**«29» մայիսի 2024 թվականի N 1605-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 58/2 ՀԱՍՑԵԻ 6.09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 6.09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (3.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԶԱՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տերյան փողոց 58/2 հասցեի 6.09 (վեց ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով առևտրի և սպասարկման օբյեկտը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N19042024-08-0041 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի N109-Ա որոշումը և քաղաքացի Ազատ Բաղդասարյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N 23992 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Տերյան փողոց 58/2 հասցեի հողամասում կառուցված 6.09 (վեց ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (3.12( երեք ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով առևտրի և սպասարկման օբյեկտը՝ 149357( հարյուր քառասունինը հազար երեք հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ազատ Բաղդասարյանին:
2. Գյումրի քաղաքի Տերյան փողոց 58/2 հասցեի 6.09 (վեց ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 64030 (վաթսունչորս հազար երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ազատ Բաղդասարյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Ազատ Բաղդասարյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Ազատ Բաղդասարյանի միջոցների հաշվին:

29.05.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» Տեպտեմբերի 2024 **թվականի** N 1604-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ № 17/5 ՀԱՍՑԵԻ 11.44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի № 21 հասցեի 311.23 (երեք հարյուր տասնմեկ ամբողջ քսաներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և սպասարկման օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24102023-08-0038 վկայական):

Քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08052024-08-0030 վկայական) Տիգրանյան փողոցի № 17/5 հասցեի 11.44 (տասնմեկ ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայքնի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի № 113-Ա որոշումը և քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 26-ին № 3855 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի № 21 հասցեի 311.23 (երեք հարյուր տասնմեկ ամբողջ քսաներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Տիգրանյան փողոցի № 17/5 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 11.44 (տասնմեկ ամբողջ քառասունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 78180 (յոթանասունութ հազար մեկ հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշման ուժի մեջ է մտնում քաղաքացի Վահրամ Ալեքսանի Թադևոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբերի 2024 **թվականի** N 1602-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈԳՈՒՆՑԻ ՓՈՂՈՑ № 3/6 ՀԱՍՑԵԻ 18.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցի 3 շենք № 4 հասցեի 123.48 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ քառասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Անահիտ Ջանիբեկի Աբրահամյանին (3/4մաս) և Գրիգոր Մամիկոնի Աբրահամյանին (1/4մաս) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30122020-08-0030 վկայական):

Քաղաքացիներ Անահիտ Աբրահամյանը և Գրիգոր Աբրահամյանը դիմել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01042024-08-0072 վկայական) Գոգունցի փողոցի № 3/6 հասցեի 18.23 (տասնութ ամբողջ քսաներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի № 114-Ա որոշումը և քաղաքացիներ Անահիտ Աբրահամյանի և Գրիգոր Աբրահամյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 10-ին № 22483 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացիներ Անահիտ Ջանիբեկի Աբրահամյանին (3/4 մաս) և Գրիգոր Մամիկոնի Աբրահամյանին (1/4 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գոգունցի փողոցի 3 շենք № 4 հասցեի 123.48 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ քառասունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Գոգունցի փողոցի № 3/6 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 18.23 (տասնութ ամբողջ քսաներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 191670 (մեկ հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Անահիտ Ջանիբեկի Աբրահամյանի և Գրիգոր Մամիկոնի Աբրահամյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Անահիտ Ջանիբեկի Աբրահամյանին և Գրիգոր Մամիկոնի Աբրահամյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«29» մայիսի 2024 **թվականի** N 1602-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 158 ՀԱՍՑԵԻ 13.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 158/3 ՀԱՍՑԵԻ 13.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի № 158/3 հասցեի 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03052024-08-0045 վկայական):

Քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ վերը նշված հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06052024-08-0040 վկայական) Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի № 158 հասցեի 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի հետ փոխանակելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի N 112-Ա որոշումը և քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 06-ին N 7879 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի № 158 հասցեի 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը փոխանակության միջոցով օտարել քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի № 158/3 հասցեի 13.5 (տասներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հետ:
2. Օրենքով սահմանված կարգով կնքել հողամասերի փոխանակության մասին պայմանագիր:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Արման Գրիգորի Ասատրյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Արման Գրիգորի Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«29» Նոյեմբեր 2024 թվականի №1601-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ 84 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №13012017-08-0008) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Վարազդատ Հարությունյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №8957 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ռուսթավելու փողոց 84 հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №13012017-08-0008) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 717.39 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
   **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Ռուսթավելու փողոց, 84 շինություն**
2. 896.68 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
   **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Ռուսթավելու փողոց, 84/2 շինություն**

Х

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» Հուլիսի 2024 թվականի №1600-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ 44 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2513172) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գրիշա Ասատրյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №8803 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Պուշկինի փողոց 44 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2513172) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Պուշկինի փողոց, 6-րդ նրբանցք, 7 բնակելի տուն**

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2024 **թվականի** N 1599-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 127.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 127.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (106.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 127.8 (հարյուր քսանյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 127.8 (հարյուր քսանյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (106.1 (հարյուր վեց ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023UNC2AE ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 127.8 (հարյուր քսանյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 127.8 (հարյուր քսանյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (106.1 (հարյուր վեց ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Աննա Սարգսի Պապոյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«29» մայիսի 2024 **թվականի** N 1598Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 267.94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 103.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (85.94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Բուլվարային թաղամասում ինքնակամ զբաղեցրած 267.94 (երկու հարյուր վաթսունյոթ ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 103.64 (հարյուր երեք ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (85.94 (ութսունհինգ ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023QDAZHL ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Բուլվարային թաղամասում ինքնակամ զբաղեցրած 267.94 (երկու հարյուր վաթսունյոթ ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 103.64 (հարյուր երեք ամբողջ վաթսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (85.94 (ութսունհինգ ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վազգեն Ռուբենի Մովսիսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29.05.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» դեկտեմբերի 2024 թվականի N 1597 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 30 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 259.11 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 102.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 79.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, 60.31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 46.46 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 30 հասցեի շենքի հարևանությամբ 259.11 (երկու հարյուր հիսունինն ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 102.01 (մեկ հարյուր երկու ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 79.0 (յոթանասունինը) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, 60.31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 46.46 (քառասունվեց ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով կիսակառույց բնակելի շինություն, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարգպետունին, Գևորգ Մխիթարի Մարգպետունին և Հերիքնազ Վարդգեսի Մարգպետունին:

Նկատի ունենալով, որ շինությունների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունները Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող N 2023EMDQRA և N 20235VHPAJ տեղեկանքները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 30 հասցեի շենքի հարևանությամբ 259.11 (երկու հարյուր հիսունինն ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 102.01 (մեկ հարյուր երկու ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 79.0 (յոթանասունինը) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, 60.31 (վաթսուն ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 46.46 (քառասունվեց ամբողջ քառասունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով կիսակառույց բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 30 հասցեի շենքի հարևանությամբ 259.11 (երկու հարյուր հիսունինն ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում առկա 11.95 (տասնմեկ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը թողնել ինքնակամ:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունները և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացիներ Լևոն Մխիթարի Մարգպետունուն, Գևորգ Մխիթարի Մարգպետունուն և Հերիքնազ Վարդգեսի Մարգպետունուն:
4. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29.05.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2024 **թվականի** N 1596-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑԻ N 1 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 37.21 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 37.21 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 25.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի N 1 հասցեի շենքի հարևանությամբ 37.21 (երեսունյոթ ամբողջ քսանմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 37.21 (երեսունյոթ ամբողջ քսանմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 25.0 (քսանհինգ) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ավետիք Ալբերտի Պողոսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2023KH5CV9՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի N 1 հասցեի շենքի հարևանությամբ 37.21 (երեսունյոթ ամբողջ քսանմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 37.21 (երեսունյոթ ամբողջ քսանմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 25.0 (քսանհինգ) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Ավետիք Ալբերտի Պողոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

29.05.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«29» մայիսի 2024 **թվականի** N 1595-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՄՍԱՐԻ ԱՎԴԱԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 219.82 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 648.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 1852-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող հողամասում քաղաքացի Անդրանիկ Կամսարի Ավդալյանի կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի շինություն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Անդրանիկ Կամսարի Ավդալյանը:

Քաղաքացի Անդրանիկ Կամսարի Ավդալյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 5-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի մայիսի 20-ին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-20052024-08-0205 որոշումը և հիմք ընդունելով և քաղաքացի Անդրանիկ Կամսարի Ավդալյանի դիմումները (մուտքագրված համայնքապետարանում 2018 թվականի սեպտեմբերի 24-ին-ին N 11786 և 2024 թվականի մայիսի 24-ին N 9084 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Անդրանիկ Կամսարի Ավդալյանի (ծնված 1954 թվականի հոկտեմբերի 12-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 219.82 (երկու հարյուր տասնինն ամբողջ ութսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող տան հողամասին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 248.36 (երկու հարյուր քառասունութ ամբողջ երեսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված անկառուցապատ հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Անդրանիկ Կամսարի Ավդալյանին, տվյալ հողամասի՝ մինչև 2021 թվականի հունվարի 01-ը գործող կադաստրային արժեքով, որը կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 475361 (չորս հարյուր յոթանասունհինգ հազար երեք հարյուր վաթսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 248.36 (երկու հարյուր քառասունութ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
5. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Անդրանիկ Կամսարի Ավդալյանի միջոցների հաշվին:
6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 08-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի հարևանությամբ գտնվող, քաղաքացի Անդրանիկ Ավդալյանի կողմից կառուցապատման համար զբաղեցրած 648.36 քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 219.82 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման» N 1852-Ա որոշումը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անդրանիկ Կամսարի Ավդալյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

29.05.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<27>> Հունիսի 2024 թվականի N 1594-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ –ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀԱԿՈԲԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Ռուբենի Սանոյանի գրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստի ժամանակավոր պաշտոնակատար Լևոն Հակոբի Բարսեղյանին գործուղել քաղաք Աբովյան՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի հետ համատեղ իրականացվող «Տեղական մակարդակում մասնակցային բյուջետավորման ներդրման» նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը մասնակցելու նպատակով:

**2.** Գործուղման ժամկետը 1 (մեկ) օր՝ 2024 թվականի մայիսի 29-ը:

**3.**Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով:

**4.**Գործուղման ընթացքում Լևոն Հակոբի Բարսեղյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Ալվարդ Մայիսի Հակոբյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լևոն Հակոբի Բարսեղյանին և Ալվարդ Մայիսի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

27.05.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» Նոյեմբերի 2024 թվականի N 1593Ա

**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՍԱՅԱՆ, ՊԱՎԼՈՎԻ, ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ 0,56 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ 46Գ ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԻ ԱՄՐԱՑՄԱՆ, ԼՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Եսայան, Պավլովի, Բաշինջաղյան փողոցներին հարող 0,56 հա մակերեսով տարածքում զբոսայգու ստեղծման և կազմակերպման աշխատանքների և Գյումրի համայնքի Խորենացու 46գ հասցեի կիսակառույց շենքի ամրացման, լրակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝
   Հանձնաժողովի նախագահ՝
   1) Մենուա Մկրտչյան – համայնքի ղեկավարի խորհրդական,
   Հանձնաժողովի անդամներ՝
   2) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար,
   3) Շուշիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ,
   4) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ
   5) Հրաչ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,
   Հանձնաժողովի քարտուղար՝
   6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1592-Ա

**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՍԱՅԱՆ, ՊԱՎԼՈՎԻ, ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻՆ ՀԱՐՈՂ 0,56 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ 46Գ ՀԱՍՑԵԻ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԻ ԱՄՐԱՑՄԱՆ, ԼՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Եսայան, Պավլովի, Բաշինջաղյան փողոցներին հարող 0,56 հա մակերեսով տարածքում զբոսայգու ստեղծման և կազմակերպման աշխատանքների և Գյումրի համայնքի Խորենացու 46գ հասցեի կիսակառույց շենքի ամրացման, լրակառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովհաննես Ղազարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,

գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովհաննես Սահակյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

27.05.2024

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1591-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆՏԱՌԱՎԱՆԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ N 48/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 135.57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (108.29 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 225.94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԱՐԻԱՄ ԿՈԼՅԱՅԻ ՀԱՐՈՅԱՆԻՆ, ԿՈԼՅԱ ՌՈՒԲԵՆԻ ՀԱՐՈՅԱՆԻՆ ԵՎ ՔՐԻՍՏԻՆԵ ՌՈԲԵՐՏԻ ՀԱՐՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Անտառավանի 3-րդ թաղամաս N 48/13 հասցեի 225.94 (երկու հարյուր քսանհինգ ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 15042024-08-0023 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի N 109-Ա որոշումը, հիմք ընդունելով քաղաքացի Մարիամ Կոլյայի Հարոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի սեպտեմբերի 28-ին N 20532 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Անտառավանի 3-րդ թաղամաս N 48/13 հասցեի 135.57 (հարյուր երեսունհինգ ամբողջ հիսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (108.29 (հարյուր ութ ամբողջ քսանինն հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 800811 (ութ հարյուր հազար ութ հարյուր տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի շինությունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Մարիամ Կոլյայի Հարոյանին, Կոլյա Ռուբենի Հարոյանին և Քրիստինե Ռոբերտի Հարոյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անտառավանի 3-րդ թաղամաս N 48/13 հասցեի 225.94 (երկու հարյուր քսանհինգ ամբողջ իննսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1003625 (մեկ միլիոն երեք հազար վեց հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Մարիամ Կոլյայի Հարոյանին, Կոլյա Ռուբենի Հարոյանին և Քրիստինե Ռոբերտի Հարոյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Մարիամ Կոլյայի Հարոյանը, Կոլյա Ռուբենի Հարոյանը և Քրիստինե Ռոբերտի Հարոյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մարիամ Կոլյայի Հարոյանին, Կոլյա Ռուբենի Հարոյանին և Քրիստինե Ռոբերտի Հարոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Մարիամ Կոլյայի Հարոյանի, Կոլյա Ռուբենի Հարոյանի և Քրիստինե Ռոբերտի Հարոյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *ՈՐՈՇՈՒՄ*

***«27» մայիսի 2024 թվականի N1590-Ա***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԿՐՏՉՅԱՆ ՓՈՂՈՑ 38/6 ՀԱՍՑԵԻ 40.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 40.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (33.51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԵՐԻ ԵՂՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Մկրտչյան փողոց 38/6 հասցեի 40.4 (քառասուն ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N25042024-06-0033 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի N109-Ա որոշումը և քաղաքացի Մերի Եղոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N 24926 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Մ. Մկրտչյան փողոց 38/6 հասցեի հողամասում կառուցված 40.4 (քառասուն ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (33.51( երեսուներեք ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը՝ 110090 ( հարյուր տասը հազար իննսուն) Հայաստանի Հա՚րապետության դրամ արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Մերի Եղոյանին:
2. Գյումրի քաղաքի Մ. Մկրտչյան փողոց 38/6 հասցեի 40.4 (քառասուն ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 424766 (չորս հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Մերի Եղոյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Մերի Եղոյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Մերի Եղոյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*«27» մայիսի 2024 թվականի N 1589-Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՎԱՆԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԷԼԵԿՏՐՈՊՐԻԲՈՐՆԻ 11 ՇԱՐՔ N2Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 43.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 368.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գևորգ Վանիկի Մխիթարյանին պատկանող Գյումրի քաղաքի Էլեկտրոպրիբորնի 11 շարք N2ա հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 43.85(քառասուներեք ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 368.24(երեք հարյուր վաթսունութ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:
Քաղաքացի Գևորգ Վանիկի Մխիթարյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023MFTNFR ծածկագիրը, քաղաքացի Գևորգ Վանիկի Մխիթարյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N2176 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացի Գևորգ Վանիկի Մխիթարյանի (ծնված 1986 թվականի հունիսի 24-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Էլեկտրոպրիբորնի 11 շարք N2ա հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 104.43 (հարյուր չորս ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունների նկատմամբ:
2.Քաղաքացի Գևորգ Վանիկի Մխիթարյանին պատկանող Գյումրի քաղաքի Էլեկտրոպրիբորնի 11 շարք N2ա հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 68.24 (վաթսունութ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Գևորգ Վանիկի Մխիթարյանին՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 4442 / չորս հազար չորս հարյուր քառասուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ 1 /մեկ/ քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 303122 /երեք հարյուր երեք հազար հարյուր քսաներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 68.24 (վաթսունութ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր /պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Էլեկտրոպրիբորնի 11 շարք N2ա հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 43.85(քառասուներեք ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
5.Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ Լ.ՍԱՆՈՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«27» Մայիսի 2024 **թվականի** N 1588Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ № 18/3 ՀԱՍՑԵԻ 994.02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գործարանային փողոց № 18/3 հասցեի 994.02 (ինը հարյուր իննսունչորս ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողայինօրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Գործարանային փողոց № 18/3 հասցեի 994.02 (ինը հարյուր իննսունչորս ամբողջ երկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

27.05.2024

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» ճուլիսի 2024 **թվականի** N 1587-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ № 20/5 ՀԱՍՑԵԻ 624.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գործարանային փողոց № 20/5 հասցեի 624.0 (վեց հարյուր քսանչորս) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Գործարանային փողոց № 20/5 հասցեի 624.0 (վեց հարյուր քսանչորս) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» Մայիսի 2024 **թվականի** N 1586-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ե. ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑ № 145 ՀԱՍՑԵԻ 865.10 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ե. Լալայան փողոց № 145 հասցեի 865.10 (ութ հարյուր վաթսունհինգ ամբողջ տասը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողայինօրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ե. Լալայան փողոց № 145 հասցեի 865.10 (ութ հարյուր վաթսունհինգ ամբողջ տասը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

X
Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1585-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ե. ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑ № 147 ՀԱՍՑԵԻ 892.19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ե. Լալայան փողոց № 147 հասցեի 892.19 (ութ հարյուր իննսուներկու ամբողջ տասնիննը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողայինօրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ե. Լալայան փողոց № 147 հասցեի 892.19 (ութ հարյուր իննսուներկու ամբողջ տասնիննը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1584-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՌՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 109 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Գառնիկ Ներսիսյանի 2024 թվականի մայիսի 22-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մայիսի 22-ին 8955 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել Ա/Ձ Գառնիկ Ներսիսյանին Գյումրի քաղաքի Գորկու 109 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 0,5 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Գառնիկ Ներսիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

27.05.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1583Ա

**<<ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ>> ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Գառնի Ինվեստ>> ՈՒՎԿ ՓԲԸ-ի 2024 թվականի փետրվարի 01-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 01-ին 1978 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Գառնի Ինվեստ>> ՈՒՎԿ ՓԲԸ-ին Գյումրի քաղաքի Տ. Մեծ 8 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 3,6 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հունվարի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գառնի Ինվեստ>> ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրեն Բ. Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1582-Ա

### <<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2024 թվականի մայիսի 20-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մայիսի 21-ին 8869 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա փողոցում տեղադրել (տեղաբաշխել) սիթի-ֆորմատներին գովազդային պաստառներ ընդհանուր 30 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի մայիսի 06-ից մինչև 2024 թվականի հունիսի 06-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

27.05.2024

X

ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» Մայիսի 2024 **թվականի** N 1581-Ա

### <<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀՐԱՊԱՐԱԿ ՓՈՂՈՑՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ի 2024 թվականի մայիսի 10-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մայիսի 21-ին 8871 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ.

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Բագրատունյաց հր. փողոցում ավտոբուսային կանգառներին տեղադրել (տեղաբաշխել) գովազդային պաստառներ ընդհանուր 24 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի մայիսի 13-ից մինչև 2024 թվականի հունիսի 13-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

27.05.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*«27» մայիսի 2024 թվականի N 1580-Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ (2/6), ԳԱՅԱՆԵ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ (1/6), ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ(1/6), ՎԱՀԱՆ ԱՐՏԱՇԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ(1/6), ԱՐԳԻՆԱ ԱՐՏԱՇԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ(1/6) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԻԵՆՆԱՅԻ ՓՈՂՈՑ N10 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 50.18ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ( 45.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Արտաշես Հարությունի Խաչատրյանին(2/6), Գայանե Վարազդատի Շաբոյանին(1/6), Հարություն Արտաշեսի Խաչատրյանին(1/6), Վահան Արտաշեսի Խաչատրյանին(1/6), Արգինա Արտաշեսի Խաչատրյանին(1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Վիեննայի փողոց N10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 50.18(հիսուն ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (45.26(քառասունհինգ ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություններ ։

Քաղաքացի Արտաշես Հարությունի Խաչատրյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023AYGFU4 ծածկագիրը և քաղաքացի Արտաշես Հարությունի Խաչատրյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N8204 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Արտաշես Հարությունի Խաչատրյանին(2/6), Գայանե Վարազդատի Շաբոյանին(1/6), Հարություն Արտաշեսի Խաչատրյանին(1/6), Վահան Արտաշեսի Խաչատրյանին(1/6), Արգինա Արտաշեսի Խաչատրյանին(1/6) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Վիեննայի փողոց N10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 50.18(հիսուն ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (45.26(քառասունհինգ ամբողջ քսանվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 116217(հարյուր տասնվեց հազար երկու հարյուր տասնյոթ)Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

27.05.2024

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

05511159

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«27» Հունիսի 2024 թվականի N 1579-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 10 ՇԵՆՔԻ N 2/1 ՀԱՍՑԵԻ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՅԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.**

Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոց 10 շենքի N 2/1 հասցեի հեռախոսակայանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Վարդուհի Հովհաննեսի Սաֆարյանին և Ռուստամ Ալբերտի Առաքելյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26072021-08-0009 վկայական):

Քաղաքացի Ռուստամ Ալբերտի Առաքելյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն և Վարդուհի Հովհաննեսի Սաֆարյանին պատկանող Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոց 10 շենքի N 2/1 հասցեի հեռախոսակայանի գործառական նշանակությունը որպես առևտրի և սպասարկման օբյեկտ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Ռուստամ Ալբերտի Առաքելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 06-ին N 7922 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել քաղաքացիներ Վարդուհի Հովհաննեսի Սաֆարյանին և Ռուստամ Ալբերտի Առաքելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոց 10 շենքի N 2/1 հասցեի հեռախոսակայանի գործառական նշանակությունը՝ որպես առևտրի և սպասարկման օբյեկտ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Վարդուհի Հովհաննեսի Սաֆարյանին և Ռուստամ Ալբերտի Առաքելյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *ՈՐՈՇՈՒՄ*

*«27» Sեպտեմբեր 2024 թվականի N 1578-Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ N157 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ԴՌՆԵՐԸ ԵՎ ԲԱՑՎԱԾՔԸ 3(ԵՐԵՔ) ՀԱՏ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 64.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Սամվել Հովհաննեսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Իսահակյան փողոց N157 հասցեի տանը ինքնակամ ձևափոխված են դռներ և բացվածք 3(երեք) հատ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 64.9 (վաթսունչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Սամվել Հովհաննեսի Հակոբյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N12032024-08-0039 վկայականը, քաղաքացի Սամվել Հովհաննեսի Հակոբյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N4715 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Սամվել Հովհաննեսի Հակոբյանի (ծնված 1949 թվականի օգոստոսի 10-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Իսահակյան փողոց N157 հասցեի տան հողամասին կից, ավել օգտագործվող 64.9 (վաթսունչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Սամվել Հովհաննեսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Իսահակյան փողոց N157 հասցեի տան ինքնակամ ձևափոխված դռները և բացվածք 3(երեք) հատ ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 11313 (տասնմեկ հազար երեք հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

27.09.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«27» Տարբերակ 2024 **թվականի** N 1577Ա

**«ՊԻՑՑԱ ՍԹՈՐԻ 1» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՏԻԳՐԱՆ ԳԱՐԵԳԻՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔ 1 ՄՈՒՏՔ ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Պիցցա սթորի 1» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Գարեգինյանի (ՀՎՀՀ՝ 01049099, գրանցման ամսաթիվը՝ 23.12.2022 թ.) 2024 թվականի մայիսի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մայիսի 17-ին 8636-2024 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Պիցցա սթորի 1» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Գարեգինյանին Գյումրի քաղաքի Ռիժկովի փ. 1 շ. 1 մուտք հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Պիցցա սթորի 1» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Գարեգինյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Լ. ՍԱՆՈՅԱՆ
(փոխարինող)

**2024 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1576-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 851-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 19-ի «Քաղաքացի Ջավահիր Արամի Խլղաթյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ջափարիձեի փողոցի N 49 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 128.57 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 13.47 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 851-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած բացթողնման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 19-ի «Քաղաքացի Ջավահիր Արամի Խլղաթյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ջափարիձեի փողոցի N 49 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 128.57 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 13.47 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 851-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝
   1) Վերնագրում «շինությունններն» բառից հետո լրացնել «, ինքնակամ պատուհանի ձևափոխված 1 (մեկ) դուռը» թիվը և բառերը,
   2) Նախաբանի 1-ին պարբերությունում «շինություններ» բառից հետո լրացնել «, ինքնակամ պատուհանի է ձևափոխված 1 (մեկ) դուռ» թիվը և բառերը,
   3) Նախաբանի 3-րդ պարբերությունում «22.1-րդ կետի» թվից և բառից հետո լրացնել «, 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի» թվերը և բառերը,
   4) Որոշման 1-ին կետում «շինությունները» բառից հետո լրացնել «ինքնակամ պատուհանի ձևափոխված 1 (մեկ) դուռը» թիվը և բառերը,
   5) Որոշման 1-ին կետում «օրինական» բառից հետո լրացնել «տեղական բյուջե ենթակա է գանձման 3206 (երեք հազար երկու հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ» թիվը և բառերը,
   6) Որոշման 2-րդ կետում «02» թիվը փոխարինել «11» թվով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«27» նոյեմբ. 2024 թվականի № 1575Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՔՈՒԹԱԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 5-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 15Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №11398) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ Նազարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №8690 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Քութաիսյան փողոց, 5-րդ նրբանցք, 15ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №11398) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Դեմիրճյան փողոց, 5-րդ նրբանցք, 15/1 բնակելի տուն**

Недействительная подпись

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Լ. ՍԱՆՈՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«27» հունիսի 2024 թվականի №1574Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 448.84 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 320.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 29-ի №1260–Ա որոշումը, հողամասի հատակագիծը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 448.84 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 320.25 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությանը տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Սավոյան փողոց, 19/5 շինություն**

Недействительная подпись

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Լ. ՍԱՆՈՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1573-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 301-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 15-ի N 301-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20/05/2024 թվականի N Կ-20052024-08-0094 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 15-ի <<Քաղաքացի Վոլոդ Ալեքսանի Բաղդասարյանին պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 268/1 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 9,79 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 279,57 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 301-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) նախաբանում <<տան>> բառից հետո լրացնել <<անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26012021-08-0021>> թվերը և բառերը:

27.05.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**
**2024 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«27» մայիսի 2024 **թվականի** N 1572-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 03-Ի N 1030-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 03-ի N 1030-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20/05/2024 թվականի N Կ-20052024-08-0121 որոշում): Ներկայացվել է նոր ճշգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 03-ի <<Քաղաքացի Արտաշես Լյովայի Հուրիխանյանին պատկանող Գյումրի քաղաքի Ա.Արմենյան փողոց N 9 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 123,93 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը, ինքնակամ փակված 3(երեք) դուռը, ինքնակամ 1(մեկ) դուռը պատուհանի ձևափոխելը օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 38,29 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1030-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետում <<5,1 (հինգ ամբողջ մեկ տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<4,58(չորս ամբողջ հիսունութ հարյուրերորդական)>> թվով և բառերով.

2) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<ձևափոխելը>> բառից հետո լրացնել <<ինքնակամ բացված 1(մեկ) պատուհանը>> բառերը և թիվը.

3) որոշման 2-րդ կետում <<27127(քսանյոթ հազար մեկ հարյուր քսանյոթ)>> թիվը և բառերը փոխարինել <<29141(քսանինը հազար մեկ հարյուր քառասունմեկ)>> թվով և բառերով:

27.05.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» Դեկտեմբերի 2024 **թվականի** N 1571-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 2 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ N 1/1 ՀԱՍՑԵԻ ԽԱՆՈՒԹԻՆ ԿԻՑ 29.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 29.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 22.43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ալեքսան Հակոբի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցի N 2 հասցեի շենքի N 1/1 հասցեի խանութին կից 29.9 (քսանինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 29.9 (քսանինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր արտաքին 22.43 (քսաներկու ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ալեքսան Հակոբի Սիմոնյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2022CNHUMJ՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ռիժկովի փողոցի N 2 հասցեի շենքի N 1/1 հասցեի խանութին կից 29.9 (քսանինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 29.9 (քսանինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր արտաքին 22.43 (քսաներկու ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունը համարել համայնքի սեփականություն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունը և հողամասը նախապատվության իրավունքով վարձակալության առաջարկություն անել քաղաքացի Ալեքսան Հակոբի Սիմոնյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2024 **թվականի** N 1570-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԱՏԵԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության կարատեի պատանիների և երիտասարդների 2024 թվականի հունիսի 2–ին Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով կարատեի ֆեդերացիայի 2024 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2024 թվականի մայիսի 23-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության կարատեի պատանիների և երիտասարդների առաջնությանը մասնակցելու համար 2024 թվականի հունիսի 2–ին քաղաք Երևան գործուղել թվով 2 մարզիկի և 1 մարզիչի գործուղման ծախսերի համար հատկացնել 9.000(ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Լ.ՍԱՆՈՅԱՆ

**2024 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թ.
-Տարբեր- -----24-ի- N -1570-Ա- որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության կարատեի պատանիների և երիտասարդների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Պապոյան | Սամվել | մարզիկ | AX0257147 | 11802057242600 | 3.000 |
| 2. | Հարությունյան | Տիգրան | մարզիկ | AT0407904 | 1570014530995300 | 3.000 |
| 3. | Անտանոսյան | Արման | մարզիչ | 55 0297147 | 1570084733220100 | 3.000 |
| Ընդամենը | | | | | | 9.000 |